**Մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Վանաձորի Ս. Նալչռանյանի անվան 13 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար**

Մրցույթն անցկացվում է 2 փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1),
- մեկ լուսանկար 3 x 4 չափի,
- բարձրագույն կրթությունը հվաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5), այլ պետությունների քաղաքացիները՝ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունե նա լու դեպքում՝հավաստող փաստաթուղթ:

  Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

  Փաստաթղթերն ընդունվում են մայիսի 10-ից մինչև մայիսի 23-ը ներառյալ, ամեն օր՝ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

  Մրցույթը տեղի կունենա **2023 թ. մայիսի 25-ին՝ ժամը 14:00-ին**, Վանաձորի Ս. Նալչռանյանի անվան թիվ 13 ավագ դպրոցում, հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Ուսանողական 7: Տեղեկությունների համար զանգահարել՝ (0322) 2-65-07 հեռախոսահամարով: